Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի
2020 թվականի հրամանով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ..... 4

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 7

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 17

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 25

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 30

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 33

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 37

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ 42

8.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 42

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 43

10. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՋՄՎԱԾ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 52

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) սահմանված ժամկետներում կատարվել են հետևյալ միջոցառումները՝

- ✓ ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ շինարարական թույլտվությունների և շինարարությունը սկսելու վերաբերյալ տեղեկանքների էլեկտրոնային հենքերի ձևավորում.
- ✓ Տեսչական մարմնի ոլորտային փաստաթղթերի, ձևաթղթերի լրամշակում, հաստատում.
- ✓ Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ հարցազրույցների կազմակերպում և անցկացում.
- ✓ Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում.
- ✓ ըստ Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումների նպատակների, խնդիրների և արդյունքների վերաբերյալ հրապարակումների պատրաստում, հարցազրույցների կազմակերպում՝ տարբեր ձևաչափերով (տպագիր, ռադիո և հեռուստատեսային հարցազրույցներ).
- ✓ 1 սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում.
- ✓ ԶԼՄ-ներում տեղ գտած վերահսկողության ոլորտին առնչվող և հանրային հետաքրքրություններ առաջացնող հրապարակումների մշտադիտարկում, հայտնաբերված հրապարակումների վերաբերյալ արագ արձագանքում(պատասխանատուների կողմից պատասխանի, հերքման և/կամ պարզաբանման ստացում և տարածում։

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետևանքով ստեղծված իրավիճակով պայմանավորված Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված մի շարք միջոցառումներ չեն կատարվել կամ կատարվել են ոչ ամբողջ ծավալով։ Այն է,

- ✓ ստուգումների տարեկան ծրագրով տրանսպորտի անվտանգության բնագավառում նախատեսված 17 ստուգումներից ավարտվել է 8-ը.
- ✓ ստուգումների տարեկան ծրագրով էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում նախատեսված 133 ստուգումներից ավարտվել է 55-ը.
- ✓ ստուգումների տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված 393 ստուգումներից ավարտվել է 195-ը.

- ✓ ստուգումների տարեկան ծրագրով հողի օգտագործման և պահպանման բնագավառում նախատեսված 5 ստուգումներից ավարտվել է 1-ը.
- ✓ մայիս-հունիս ամիսներին նախատեսված մանկական ամառային ճամբարներում հրդեհատեխնիկական հետազոտությունները չեն իրականացվել.
- ✓ 2020թ. երկրորդ եռամսյակի ընթացքում չեն իրականացվել իրազեկում-հանդիպումներ Երևանում և ՀՀ մարզերում տնտեսվարող սուբյեկտների հետ՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու և կանոնակարգելու նպատակով:

2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումների կատարումը հետաձգվել է.

- ✓ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի ««Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2399-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության 2007 թվականի 12 ապրիլի «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննության կարգը» հաստատելու մասին N 580-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին թիվ 624 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման

կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին՝ թիվ 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

- ✓ Գործավարության կարգի մշակում և հաստատում.
- ✓ Ստուգումների ուղեցույցի մշակում և ՏՄ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացում:

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով 1-ին կիսամյակի ընթացքում նախատեսված էր իրականացնել ստուգումներ 393 արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցակայաններում, առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում, պայթուցիկ նյութերի, նավթամթերքի, հեղուկ և բնական գազերի պահեստներում: Սակայն հաշվի առնելով ՀՀ-ում ստեղծված իրավիճակը՝ Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրով ստուգումները կասեցվել են: Արդյունքում, ավարտվել է 195 ստուգում (նախատեսված ընդհանուր քանակի 49.6%): Եվս 2 ստուգում կատարվել է Վարչապետի հանձնարարականի և 2 ստուգում՝ հանրությունից ստացված (այդ թվում նաև թեժ գծով) դիմում-բողոքների հիման վրա:

Իրականացված 199 ստուգումների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը.



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 1031 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումների ընթացքում 200 քմ և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 34 օբյեկտներում բացահայտվել է 120 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 11,6%-ը:

Հիմնական խախտումներն են.

- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 20 դեպք,*
- *15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությամբ սենքերի դռները չեն բացվում դեպի դուրս– 18 դեպք,*
- *Օբյեկտներն ապահովված չեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 16 դեպք:*

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 33 կարգադրագիր:

Ստուգումների արդյունքում խախտումների բացակայության վերաբերյալ տրամադրվել է 1 տեղեկանք ԻՄԵՔՍ ԳՐՈՒՊ ՍՊ ընկերությանը:

Մինչև 200 քմ մակերեսով առևտրի և հասարակական սննդի 4 օբյեկտներում բացահայտվել է 26 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2.5%-ը:

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 3 կարգադրագիր:

Խախտումների բացակայության վերաբերյալ տրամադրվել է 1 տեղեկանք (Ա/Ձ ՉԱԽՈՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇՈՏԻ):

Նշված ժամանակահատվածում 200 քմ և ավելի մակերեսով արտադրական 50 կազմակերպությունում (2-ը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականով) բացահայտվել է 281 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների ընդհանուր քանակի 27,3%-ը։

Ստուգումների արդյունքում կազմվել և տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 47 կարգադրագիր։

Խախտումների բացակայության վերաբերյալ տեղեկանքներ են տրամադրվել են 3 տնտեսավարողներ սուբյեկտների (ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ, ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ ՍՊ ընկերությունների և ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆ-5 ՀԻՄՆԱՐԿ ՀՄ)

Հիմնական խախտումներն են.

- *Կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 36 դեպք,*
- *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 28 դեպք,*
- *500 քմ-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով - 27 դեպք։*

Մինչև 200 քմ մակերեսով արտադրական 4 կազմակերպությունում բացահայտվել է 32 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների 3.1%-ը։

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 4 կարգադրագիր։

Նշված ժամանակահատվածում ստուգվել է 33 բենզալիցքավորման կայան (1-ը թեժ-գծով՝ Արագածոտնի մարզում գործող ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ), բացահայտվել է 92 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 8,9%-ը։ 5 ԲԼԿ-ների վերաբերյալ (Կոտայքի մարզում գործող ՖԼԵԾ ՍՊԸ, Արարատի մարզում գործող ՄԵՍՐՈՊ ՄԱԴԱԹՅԱՆ Ա/Ձ, Երևանում գործող ԹԱԼԻՆ-1 ՍՊԸ և ԷՆ ԷԼ ՋԻ ՍՊԸ, Կոտայքի մարզի ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ) կազմվել են տեղեկանքներ՝ թերությունների բացակայության վերաբերյալ։

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել են պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 28 կարգադրագիր։

Հիմնական խախտումներն են.

- *Հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 20 դեպք,*
- *Արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 խմ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 19 դեպք,*
- *Բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով - 14 դեպք։*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է 66 գազալցավորման կայան (որից 2-ն ըստ անհրաժեշտության)։ Ստուգումների ընթացքում բացահայտվել է 427 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 41,4%-ը։ 2 ԱԳԼՃԿ-ների (Արագածոտնի մարզում՝ ՌԻՉ-ԳԱԶ ՍՊԸ և Արարատի մարզում ԱՐԱՇԱԳ ՍՊԸ) վերաբերյալ կազմվել են տեղեկանքներ՝ թերությունների բացակայության վերաբերյալ։

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել են պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 64 կարգադրագիր։

Հիմնական խախտումներն են.

- *Արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 խմ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով - 38 դեպք,*
- *Օդափոխության համակարգի աշխատանքը բլոկավորված չէ տեխնոլոգիական սարքավորման հետ այնպես, որ բացառվի սարքավորման աշխատանքը անջատված օդափոխության դեպքում - 26 դեպք,*
- *Պայթյունավտանգ կարգի շինություններում տեղադրված չեն գազի վտանգավոր կոնցենտրացիայի ազդանշանման սարքեր – 23 դեպք:*

Այլ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների մոտ ստուգումներն իրականացված ստուգումների և դրանց արդյունքում բացահայտած խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակում:

բնագավառը	Սուբյեկտ	խախտում	Տեղեկանք	Կարգադ-րագիր
ընդհանուր նշանակության պահեստներ և բազաներ	2	8	0	2
բնակելի շենքեր, հյուրանոցներ և հանրակացարաններ	1	5	0	1
գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտներ	2	10	0	2
նավթամթերքների պահեստներ	2	11	0	2
պայթուցիկ նյութերի պահեստներ	1	4	0	1
տրանսպորտային (ավտոմոբիլային և երկաթուղային) սուբյեկտ	2	10	0	2
Հեղուկ, բնական գազերի պահեստներ	2	5	0	2
ընդամենը	**12**	**53**	**0**	**12**

Տվյալ ոլորտներում արձանագրված խախտումները կազմում են խախտումների ընդհանուր քանակի 5.1%-ը:

Հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելման, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցման, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով՝ յուրաքանչյուր ստուգման ընթացքում տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվել է խորհրդատվություն:

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 2.4 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 3.25-ը: Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների 98% կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները և 2%՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումները:

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով 1-ին կիսամյակի ընթացքում նախատեսված էր կատարել 17 ստուգում տրանսպորտի բնագավառում, սակայն պայմանավորված հայտարարված արտակարգ դրությամբ՝ ավարտված է 8 ստուգում (որից 1-ը հրդեհային ոլորտի հետ համատեղ), ինչը կազմում է նախատեսված քանակի 47%-ը:

Ստուգումների ընթացքում բացահայտվել է 41 խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

- *երթուղու չվացուցակով սահմանված մեկնման ժամերի պահպանման պահանջի խախտումներ – 4 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*
- *պարբերական և սեզոնային տեխնիկական սպասարկում իրականացնելու պահանջի խախտումներ – 4 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*
- *վթարի կամ անսարքության հետևանքով ավտոբուսի դռների խափանման դեպքում ուղեսրահի ապակիների ջարդելու մուրճերի բացակայություն - 4 տնտեսավարող սուբյեկտի մոտ:*

Ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրվել է 13 կարգադրագիր:

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 5 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,9-ը: Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները (100%) նախատեսված են եղել տարեկան ծրագրով:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրով 1-ին կիսամյակի ընթացքում նախատեսված էր կատարել 133 ստուգում: Սակայն ՀՀ-ում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ստուգումները Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրով կասեցվել են: Արդյունքում, նախատեսված 133 ստուգումներից ավարտվել են 55-ը (նախատեսված ընդհանուր քանակի 41%), ընդ որում.



Ստուգումների արդյունքում արձանագրվել է 352 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Ստուգումներն իրականացվել են հետևյալ ոլորտներում.

	Ոլորտը	Սուբյեկտների քանակը	Խախտումների քանակը
1	110 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ՝ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ (ԵԿ) ԵՎ ԲԱՇԽԻՉ ՍԱՐՔՎԱԾՔԻ (ԲՍ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ	**8**	**77**
2	110 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ՝ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ	**3**	**32**

3	ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԳԱԶԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԲԱՐՁՐ ՃՆՇՄԱՆ	2	5
4	ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԳԱԶԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՄԻՋԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՃՆՇՄԱՆ ԷՆԵՐԳԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ	9	43
5	ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ (ԿԱՄ ԴՐԱ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ	49	195
ԸՆԴՀԱՆՈՒՐ		71	352

Տեխնիկական ստուգումների ընթացքում 49 տնտեսավարող սուբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում) բացահայտվել է 195 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 55,4%-ը (ընդհանուր խախտումների քանակը 352 է)։ Հիմնական խախտումները վերաբերում են.

- *կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 19 դեպք,*
- *գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող աշխատակիցների, այդ թվում նաև եռակցողների, գիտելիքների ստուգման կազմակերպմանը – 17 դեպք,*
- *առանց լիազոր մարմնից ստացված գործարկման եզրակացության գործարկված էներգատեղակայանքների առկայությանը – 14 դեպք:*

Ստուգումների արդյունքում տրվել է 1 տեղեկանք՝ խախտումների բացակայության վերաբերյալ («ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ), կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 48 կարգադրագիր։ Հարուցվել է 14 վարչական վարույթ։

Գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման 9 էներգատեղակայանքներում բացահայտվել է 43 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 12,22%-ը։

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 8 կարգադրագիր։ Հիմնական խախտումներն են.

- *շահագործման ընդունված գազատարի համար կազմված տեղեկաթերթիկի բացակայությունը – 6 հատ,*
- *շրջայցային կամ տեխնիկական սպասարկումը (զննում, կարգաբերում և մասնակի նորոգում) չկատարելը – 5 հատ,*
- *պրոֆիլակտիկ պլանային վերանորոգում չկատարելը – 5 հատ:*

Ստուգումների արդյունքում է տրվել է 1 տեղեկանք՝ խախտումների բացակայության վերաբերյալ (ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆ-5 ՀՄ)։

Նշված ժամանակահատվածում ստուգվել է գազի համակարգի՝ գազափոխադրման բարձր ճնշման 2 սուբյեկտ, բացահայտվել է 5 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,42%-ը։

110 կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում՝ էլեկտրահաղորդման օդային գծերի 3 տեխնիկական ստուգմների ընթացքում բացահայտվել է 32 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 9,1%-ը։ Հիմնական խախտումներն են.

- *ՕԳ-ի հենարանների և լարերի ապատեղակայման և փոխարինման աշխատանքները չեն կատարվել ըստ տեխնոլոգիական քարտի կամ աշխատանքների կատարման նախագծի – 3 դեպք,*
- *ՕԳ-ի պարբերական և ընթացիկ զննումների չեն իրականացվել կազմակերպության տեխնիկական ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցով - 3 դեպք,*
- *ՕԳ-ի հողակցող հաղորդիչները պահպանված չեն կոռոզիայից, բաց տեղադրած հողակցող հաղորդիչները չունեն սև ներկվածք - 3 դեպք:*

Ստուգվել են 8 110 կվ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներ՝ ենթակայաններ (ԵԿ) և բաշխիչ սարքվածքներ (ԲՍ)։

Ստուգումների ընթացքում բացահայտվել է 77 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 21,88%-ը։ Հիմնական խախտումներն են.

- *բաշխիչ սարքվածքի - տարածքի բնահողի հաղորդականության մասին տվյալների բացակայությունը – 6 հատ,*
- *բաշխիչ սարքվածքի և ՅԼՍ-ի բոլոր մետաղական մասերի հակաքայքայիչ ծածկույթի բացակայությունը – 4 հատ,*
- *ԵԿ-ի հիմնական և օժանդակ սարքավորումների նորոգման հեռանկարային տարեկան և ամսական ժամանակացույցների բացակայությունը – 4 հատ:*

Ստուգումների արդյունքում 52 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր։

1 ստուգման միջին տևողությունը կազմել է 4,02 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 1,96-ը։ Տեսչական մարմնի կողմից իրականացված բոլոր ստուգումները նախատեսված էին տարեկան ծրագրով։

Լոռու մարզում գտնվող «Լիլիթ-95» ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ «Լիլիթ-95» ՍՊ ընկերության գազամատակարարումը դադարեցված է 2018 թվականի սեպտեմբեր ամսից, գազատարը խցափակված է, իսկ չափիչ հանգույցը և անհատական ճնշման կարգավորը (ԱՃԿ) կոնսերվացված են և չեն շահագործվում։ «Ծաղկասար» ԱԿ և «Հացատու» ՍՊ ընկերությունը չեն ստուգվել, քանի որ լուծարման գործընթացի մեջ են։

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

Հողօգտագործման բնագավառում Տարեկան ծրագրով նախատեսված էր 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացնել 5 ստուգում, սակայն կատարվել է միայն մեկ ստուգում, ինչը կազմում է նախատեսվածի 20 տոկոսը:

2020թ. փետրվարի 12-ից 25-ը ներառյալ իրականացվել է տեսչական ստուգում ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության կողմից մարզի համայնքներում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ, որի ընթացքում ստուգվել են նաև մարզի վեց համայնքներ՝ Մյասնիկյան, Ոսկեհատ, Պտղունք, Մուսալեռ, Այգեկ և Գայ: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 66 խախտում: Ըստ համայնքների խախտումներն ունեն հետևյալ բաշխվածությունը.



Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ նշված բոլոր համայնքներում հողերի ընթացիկ հաշվառման աշխատանքներն իրականացվում են թերություններով, մասնավորապես չի վարվում հերթապահ կադաստրային քարտեզ: Սխալ են կազմված համայնքների հողային հաշվեկշիռները, որոնք հետագայում դառնում են մարզի և այնուհետ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը:

2020 թվականի հունվարին Տեսչական մարմին է ներկայացվել «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման վերաբերյալ գրություն, որի հիման վրա իրականացվել է ստուգում Արարատի մարզի Արգավանդ համայնքում: Ստուգման արդյունքում կազմվել է ակտ: Բացահայտված խախտումները վերացնելու և պատասխանատու պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով միջնորդություն է ներկայացվել ՀՀ համապատասխան մարզպետին:

Հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից ՔՏՀԱՏՄ ուղղված գրությունը, կապված Աբովյան համայնքում հողային հարաբերություններին և քաղաքաշինական գործունեությանը առնչվող հարցերի ուսումնասիրման խնդիրների ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ Աբովյան համայնքում Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի մարտի 5-ից 6-ը ներառյալ իրականացվել է ըստ անհրաժեշտության ստուգում, որի ընթացքում բացահայտվել են հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու հետ կապված խախտում, ինչի վերաբերյալ 09.03.2020թ. կազմվել է

N 3 ակտը: Ներկայացվել է միջնորդություն ՀՀ Կոտայքի մարզպետին՝ արձանագրված խախտման համար Աբովյան համայնքի պաշտոնատար անձանց ենթարկել վարչական պատասխանատվության, միաժամանակ պարտավորեցնելով խախտումը վերացնել ողջամիտ ժամկետներում:

2020թ. մայիսի 26-ին ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի համայնքում ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից ստացված գրությունում նշված խնդիրների ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում կազմվել է Վարչական իրավախախտումների N4 ակտը, համաձայն, որի վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է (150000) հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ և միջնորդություն է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզպետին համապատասխան պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու և ողջամիտ ժամկետում խախտումը վերացնելու համար:

2020թ. հունիսի 5-ից 8-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Արագածոտնի մարզի Ակունք համայնքում ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում կազմվել է Վարչական իրավախախտումների N6 ակտը: Համայնքում արձանագրված խախտումներին իրավական գնահատական տալու և պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ակտի մեկ օրինակը ուղղարկվել է համապատասխան իրավասու մարմիններ:

Տեսչական մարմնի կողմից հողօգտագործման բնագավառում իրականացված ստուգումների 12,5% կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները և 87,5%՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումները: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել է 10 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 3: Ըստ անհրաժեշտության կատարված ստուգումների միջին տևողությունը կազմում է 1,7 օր, մարդկային ռեսուրսը՝ 2,14:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արձանագրված հրդեհների վերլուծությունը ցույց էր տվել, որ հրդեհների 73,7 տոկոսը տեղի էր ունեցել բաց խոտածածկ տարածքներում, ուստի Տեսչական մարմնի նախաձեռնության մինչև հրդեհավտանգ ժամանակաշրջանն իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ խոտածածկ տարածքներում հրդեհները կանխելու ուղղությամբ: Մասնավորապես,

- կազմակերպվել են համատեղ խորհրդակցություններ՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների, Հայաստանի փրկարար ծառայության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ,
- նախազգուշական նամակներ են ուղարկվել Գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ բոլոր մարզպետներին: Տեսչական մարմինն արդեն իսկ ստացել է 97 պատասխան գրություններ՝ ձեռնարկված հակահրդեհային միջոցառումների վերաբերյալ: Գործառույթը կրում է շարունակական բնույթ:

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ-ում տեղի ունեցած 2756 հրդեհի դեպք (նախորդ տարվա 3451 հրդեհի փոխարեն): Արձանագրվել է հրդեհների ընդհանուր քանակի նվազում 20%-ով, իսկ խոտածածկ տարածքներում՝ 10.3%-ով: 386 հրդեհների վերաբերյալ կազմվել են ակտեր: Տեղի ունեցած հրդեհներից զոհվել է 8 (բոլորը բնակելի տարածքում), իսկ վնասվածքներ է ստացել 16 մարդ, որից 9-ը՝ մարդատար մեքենաների հրդեհների հետևանքով, 6-ը՝ բնակելի տարածքում, 1-ը՝ բենզալցակայանում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 247 <u>հրդեհատեխնիկական հետազոտություն</u> տարբեր բնույթի օբյեկտներում, ընդ որում ՀՏՀ-ների ընդհանուր քանակի 76,5% (189 հատ) կատարվել է Երևանում գտնվող օբյեկտներում, 19 հետազոտություն՝ Արմավիրում, 14-ական՝ Արագածոտնի և Արարատի մարզերում, 10՝ Կոտայքի և 1՝ Վայոց Ձորի մարզերում: Բացահայտված հիմնական խախտումները վերաբերում են

- ✓ հակահրդեհային միջտարածություններին,
- ✓ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերին,
- ✓ էլեկտրական հաղորդալարերի մոնտաժման կանոններին,
- ✓ տարահանման ելքերին:

Երևան քաղաքում գտնվող 189 բենզալցակայանների հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում արձանագրվել է 578 խախտում, որոնք վերաբերում են



Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է 224 <u>եզրակացություն</u> նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 235 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 106-ը (45%) Երևանում:

Տրամադրվել է 7 եզրակացություն՝ հրդեհ ազդարարող համակարգերի շահագործման վերաբերյալ:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարվել է 1242 դիտարկում և տեղազննում, որից 81-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված <u>սուբվենցիոն ծրագրի</u> շրջանակներում: Ըստ մարզերի դիտարկումներն ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը.



Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 807 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, այդ թվում 310-ը (38,4%) Երևանում, մնացածն՝ ըստ պատկերի.



Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 771 եզրակացություն, որից 453 դրական (ընդհանուր քանակի 58,7%) և 318 բացասական (ընդհանուր քանակի 41,3%) եզրակացություն: Ըստ մարզերի այն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է 226 <u>ինքնակամ կառույց</u> ՀՀ ամբողջ տարածքում, այդ թվում Կոտայքի մարզում՝ 63 (27,8%), Արարատի մարզում՝ 37 (16,4%), Արագածոտնի մարզում՝ 36 (15,9%), մնացածն ըստ պատկերի:



Բացահայտված խախտումները վերացնելու նպատակով մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/վերջնակետերում պարբերաբար իրականացվել է միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, միջպետական ավտոբուսային փոխադրումների ուղետոմսերի վաճառքի, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության նկատմամբ 4657 վերահսկողական միջոցառում:



Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 2438 վերահսկողական միջոցառում (ընդհանուր քանակի 52,3%), որոնց 18,7%-ը Կոտայքի մարզում, 18,5%-ը Շիրակի մարզում, 14,6%-ը Երևանում և այլն՝ համաձայն պատկերի.



Վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 33,3%-ը կազմում է թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների նկատմամբ կատարված վերահսկողական բնույթի աշխատանքը: Ընդ որում, Արմավիրի մարզում իրականացվել է 649 (41,8%) միջոցառում, Կոտայքում՝ 190 (12,3%), Սյունիքում՝ 161 (10,4%), Երևանում՝ 116 (7,5%), Գեղարքունիքում՝ 104 (6,7%), Շիրակում և Վայոց Ձորում՝ 68-ական (յուրաքնչյուրը 4,4%), Տավուշում՝ 63 (4%), Արագածոտնում՝ 60 (3,8%), Լոռիում՝ 38 (2,4%), Արարատում՝ 35 (2,3%):

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (բացառությամբ Երևանի) տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության նկատմամբ վերահսկողական միջոցառում: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 177 գովազդային վահանակներ: Այս գործառույթը շարունակական է:

Հ/Հ	Մարզեր	Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների քանակը
1	Արագածոտն	8
2	Արարատ	32
3	Արմավիր	7
4	Գեղարքունիք	22
5	Լոռի	52
6	Կոտայք	10
7	Շիրակ	23
8	Սյունիք	4
9	Վայոց Ձոր	10
10	Տավուշ	9
Ընդամենը		**177**

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու նպատակով ՀՀ պարետի որոշումներով և ցուցումներով սահմանված պայմանների պահպանման և ապահովման համար տարածքային բաժնի տրանսպորտի անվտանգության բաժամունքի մասնագետների և ՀՀ «Ճանապարհային Ոստիկանություն» ծառայության աշխատակիցների հետ համատեղ իրականացվել են կանոնավոր և ոչ կանոնավոր երթուղիներում շահագործվող գերբեռնված տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների սահմանափակման և կանխարգելման աշխատանքներ, ինչպես նաև վերահսկողություն է իրականացվել ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների ամենօրյա ախտահանման աշխատանքների նկատմամբ: Կատարված աշխատանքի արդյունքում բացահայտվել են դեպքեր, երբ երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցները իրականացրել են երթևեկը նստատեղերի քանակից ավելին նստեցումներով՝ ուղևորների գերծանրաբեռնվածությամբ, առանց ախտահանիչ նյութի և ուղևորի կամ վարորդի կողմից դիմակ չկրելու փաստով: ՀՀ ՔՏՀԱՏՄ տրանսպորտի անվտանգության մասնագետները և ՀՀ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության աշխատակիցների համագործակցության արդյունքում գերբեռնված տրանսպորտային միջոցները տեղափոխվել են ՀՀ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հատուկ պահպանվող տարածք:

Կատարվել են բազմաթիվ վերահսկողական միջոցառումներ ՃՈ հետ համատեղ, որոնց ընթացքում կազմվել են վարչական պատասխանատվության ենթարկելու 1114 արձանագրություններ (ընդ որում Երևանում՝ 676, մարզերում՝ 438) և տրվել են պարտադիր կատարման ցուցումներ, բաժանվել են ուղեցույցեր թե՛ տնտեսվարող կազմակերպության ղեկավարներին, թե՛ վարորդներին:

ՀՀ պարետին ներկայացվել է 3 գրություն տրանսպորտային միջոցների գործունեությունը 72 ժամով կասեցնելու վերաբերյալ:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատա-կարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում իրականացվել է 504 <u>տեխնիկական ստուգում</u>, որից 284-ը՝ (56,3%) էլեկտրաէներգետիկական և 220-ը՝ (43,7%) գազամատակարարման համակարգերում:



Արդյունքում տրվել է 426 (84,5 %) գործարկման եզրակացություն, իսկ թվով 78 (15,5 %)



տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են:

Գազամատակարարման համակարգում ստուգումների արդյունքում տրամադրվել է 197 գործարկման եզրակացություն, ինչը կազմում է դիմումների ընդհանուր քանակի 89,5%-ը: Տրամադրված գործարկման եզրակացությունների և մերժումների քանակի փոխհարաբերությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը՝



Էլեկտրատեղակայանքների ստուգումների արդյունքում տրամադրվել է 229 գործարկման եզրակացություն, ինչը կազմում է դիմումների ընդհանուր քանակի 8,6%-ը: Տրամադրված գործարկման եզրակացությունների և մերժումների քանակի փոխհարաբերությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը՝



Իրականացվել է մասնագիտական քննություն մահվան ելքով 12 պատահարների, որոնցից 3-ը տեղի էին ունեցել 2019 թվականի վերջին: 2020 թվականի առաջին կիսամյակում Էներգատեղակայանքներում տեղի են ունեցել մահվան ելքով 8 պատահարներ, որոնցից 5-ը՝ էլեկտրաէներգետիկական համակարգում (2-ը՝ ՀՀ Կոտայքի, 1-ը՝ Շիրակի, 1-ը՝ Գեղարքունիքի և 1-ը՝ ՀՀ Արմավիրի մարզերում), 3-ը՝ գազի համակարգում (1-ը՝ ՀՀ Լոռու և 2-ը՝ ՀՀ Տավուշի մարզերում) որոնց վերաբերյալ ՀՀ կառավարության սահմանած կարգով կազմակերպվում և իրականացվում են <u>մասնագիտական քննություններ:</u>

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովից ստացվել և ուսումնասիրվել է հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված 80 հողաշինարարական գործ: Արդյունքում տրվել է 49 դրական և 31 բացասական կարծիք



4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 172 բողոք, որից 99-ը (57,5%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 33-ը (19,3%)՝ տրանսպորտի անվտանգության, 23-ը (13,4%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 10-ը (5,8%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 7-ը (4%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին



Ըստ ամիսների հանրությունից ստացված բողոքներն ունեն հետևյալ բաշխվածությունը՝

	տրանսպորտ	քաղշին	հրդեհային	էներգետիկա	գեոդեզիա
հունվար	4	7	7	1	1
փետրվար	3	13	8		1
մարտ	3	25	4	3	
ապրիլ	1	6		1	
մայիս	4	20		3	1
հունիս	18	28	4	2	
	33	99	23	10	3

Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 50 %-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին: Ստորև բերված է բողոքների բաշխվածության գրաֆիկն ըստ տարածքային միավորների և բնագավառների:



<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

2020 թվականի 6 ամիսների ընթացքում քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և Անհատ ձեռնարկատերերից (այսուհետ՝ Հանրություն) ստացվել է 23 դիմում-բողոք, որից 16-ը Երևանում գտնվող օբյեկտների վերաբերյալ, 2-ական՝ Արմավիրի և Լոռու մարզերում և մեկական՝ Կոտայքի, Արագածոտնի, Տավուշի մարզերում: Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիմնավոր են 13-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 56,5 տոկոսը: Հիմնավոր բողոքներից 7-ը (54%) արդեն իսկ լուծում է ստացել: Հանրությունից ստացված 2 բողոքի հիման վրա, որից մեկը ստացվել է թեժ գծով, իրականացվել են ստուգումներ:

Կատարված ստուգումների և հետազոտությունների արդյունքում բացահայտված խախտումների վերաբերյալ կազմվել է 7 արձանագրություն: Բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են հակահրդեհային միջտարածություններին:

Բողոքներից 4-ը (17,4 %) ստացվել է թեժ գծով:

<u>Քաղաքաշինության բնագավառում</u>

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 99 դիմում-բողոք: Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Հիմնավոր է եղել 65 դիմում, լուծում է ստացել 41-ը (հիմնավոր բողոքների 63,1%), իսկ 24-ը գտնվում է ընթացքի մեջ:

2020 թվականի առաջին կիսամյակում ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող քաղաքաշինական ոլորտում հանդիպող խնդիրները հիմնականում վերաբերվում են

- ՀՀ կառավարության N 596 որոշմամբ հաստատված կարգերի շեղումներով համայնքների ղեկավարների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրմանը
- համայնքների ղեկավարների կողմից նախագծման թույլտվությանը (ճարտարապետահատակագծային առաջադրանքին) հակասող նախագծերի համաձայնեցմանը.
- կառուցապատողների կողմից նախագծային շեղումներով իրականացվող շինարարական աշխատանքներին:

Բողոքներից 23-ը (23,2%) ստացվել է թեժ գծով:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրված 33 դիմում-բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության, Երևանի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի և Արմավիրի տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բողոքների բաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում ստացված բողոքներից 23-ը (69,7%) ներկայացվել է թեժ գծով:

Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են երթուղիների թերի շահագործման կամ չշահագործմանը, տրանսպորտային միջոցների սխալ կահավորմանը, չվացուցակների

խախտումներին, կանոնավոր և ոչ կանոնավոր ապօրինի ուղևորափոխադրումներին և այլ: Բացահայտված խախտումների վերաբերյալ կազմվել է 5 արձանագրություն: Հանրությունից ստացված հիմնավոր 22 բողոքներից լուծում են ստացել՝ 19-ը (86,4%), 1 բողոքի լուծումը դուրս է Տեսչական մարմնի լիազորություններից, 2 բողոքի մասով առկա է օրենդրական բաց, որի շտկման մասով նախատեսվում է ներկայցնել առաջրկություն:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

Հանրությունից ստացված բոլոր 10 դիմում-բողոքները հիմնավոր են: Դրանցից 9 լուծում են ստացել (90%), 1-ն ընթացքի մեջ է: Լուծում ստացված 9-ը բողոքներից 4-ը (44,4%) վերաբերում է մայրուղային գազատարների և էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիներում իրականացվող շինարարական աշխատանքներին, 2-ը (22,2%)՝ առանց սեփականատիրոջ հետ սահմանված կարգով համաձայնեցնելու՝ սեփականաշնորհված հողամասերի տարածքով գազատարների անցկացմանը, 3-ը ՝ այլ հարցերի: Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված հարցերն ուսումնասիրվում են, ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները էներգետիկայի բնագավառում անվտանգությունը ապահովելու ուղղությամբ:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական</u>

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրվել է 7 դիմում-բողոք, որոնցից 4-ն ընթացքի մեջ են, 3-ի հիման վրա կատարվել են ստուգումներ: 2 ստուգման արդյունքում պարզվել է, որ դիմում-բողոքներում բարձրացված խնդիրը հիմնավոր չի և ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ խախտում չի արձանագրվել: Մասնավորապես,

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, քաղաքացու հրապարակումում նշված խնդիրների վերաբերյալ բողոքը՝ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից գրությամբ վերահացեյագրվել է ՔՏՀԱՏՄ-ին, որը քննարկվել է վարչության կողմից և 2020թ. հունիսի 18-ից 19-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, ստուգման արդյունքում ըստ ուսումնասիրված փաստաթղթերի ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ՝ համայնքի ղեկավարը խախտում թույլ չի տվել, որի արդյունքում կազմվել է N1 տեղեկանքը:
- 2020թ. հունիսի 18-ից 19-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ստացված գրությունում և քաղաքացու հրապարակումում նշված խնդիրների ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում կազմվել է N1 տեղեկանքը: Ըստ ուսումնասիրված

փաստաթղթերի ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ համայնքի ղեկավարը խախտում թույլ չի տվել:

2020թ. մայիսի 27-ին ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքում ՀՀ Վերին Պտղնի համայնքի բնակիչ Կ. Հովսեփյանի կողմից ստացված դիմումում նշված խնդիրների ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է ընդամենը 1 խախտում և կազմվել է Վարչական իրավախախտումների N05 ակտը, համաձայն, որի վարչական տուգանքի ընդհանուր չափը կազմել է (150000) հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ և միջնորդություն է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզպետին համապատասխան պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու և ողջամիտ ժամկետում խախտումը վերացնելու համար.

Թեժ գծով ստացվել է մեկ բողոք:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 139 արձանագրություն, որից 25-ը (18%) Գեղարքունիքի մարզում, 19-ը Շիրակի մարզում և այլն՝ ըստ պատկերի:



Տեխնիկական անվտանգության ոլորտում կայացվել է 52 որոշում՝ 26-ը՝ վարչական տույժ նշանակելու մասին, 7-ը կարճման, 6-ը կասեցման, 2-ն՝ արտադրական վտանգավոր օբյեկտի գործունեությունը դադարեցնելու մասին, 1-ը՝ վերսկսման մասին, 7-ը՝ վարչական վարույթ հարուցելու մասին (որից 5-ը՝ փորձագետի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին), 1-ը վերադաս բողոքը բավարարելու մասին, 1 որոշում վերադաս բողոքը մերժելու մասին, 1 որոշում վարչական վարույթը նոր քննության ուղարկելու մասին: Գանձված գումարի չափը կազմել է 3 430 000 դրամ:

Տեխնիկական անվտանգության բնագավառում կայացված 2 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 8-ը՝ դատական:

Քաղաքաշինության բնագավառում

Կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 54 արձանագրություն: Կայացվել է 43 որոշում վարչական տույժ նշանակելու մասին: Աղյուսակում ներկայացված է արձանագրությունների և վարչական տույժ նշանակելու մասին որոշումների քանակի բաշխվածությունն ըստ մարզերի .

	վերահսկողության արդյունքների ամփոփման արձանագրությունների քանակ	վարչական տույժ նշանակելու մասին որոշումների քանակ
Երևան	24	13
Շիրակ	6	6
Լոռի	2	2
Կոտայք	9	9
Տավուշ	5	5
Արարատ	5	5
Արմավիր	3	3
	54	43

Գանձված գումարի չափը կազմել է 7 320 000 դրամ:

Քաղաքաշինության բնագավառում կայացված 7 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 167 արձանագրություն, որից 74-ը (44,3%) Երևանում, 23-ը (13,8%) Կոտայքում, այլ մարզերն՝ ըստ պատկերի:



Կայացվել է 163 որոշում վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, 24 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճման մասին և 1 որոշում՝ վարչական վարույթի կասեցման մասին: Գանձված գումարի չափը կազմել է 830 000 դրամ:

Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից հաստատված չվացուցակներով ավտոբուսների (միկրոավտոբուսների) մեկնման ժամերը չպահպանելուն, առանց ճանապարհային թերթիկի կամ ճանապարհային թերթիկում համապատասխան նշումների

բացակայությամբ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացմանը և ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներն առանց երթուղին արտահայտող ցուցատախտակի և (կամ) երթուղու չվացուցակի և (կամ) երթուղու սխեմայի (բացառությամբ ներհամայնքային երթուղիների) և (կամ) սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշումով ցուցանակի և (կամ) տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին անհամապատասխան արտաքին և ներքին կահավորմամբ շահագործելուն:

Տրանսպորտի անվտանգության բնագավառում կայացված 1 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 22-ը՝ դատական:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 10 արձանագրություն Կայացվել է 13 որոշում վարչական տույժ կիրառելու մասին, 2 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին, 1 որոշում վերադաս բողոքի մասնակի բավարարման վերաբերյալ, գանձված գումարի չափը կազմել է 400 000 դրամ:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում կայացված 1 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 1-ը՝ դատական:

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում

Տեխնիկական և հրդեհային անվտանգության հարցերով տրամադրվել է խորհրդատվություն 308 տնտեսավարողների և քաղաքացիների, որից 54.5%-ից դեպքերում՝ տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների պահանջով: Տեսչական մարմնին առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են հրդեհային և տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների խախտումներին, այդ թվում՝

- ✓ օբյեկտների միջև հակահրդեհային միջտարածություններին, հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի առկայության պահանջներին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 գլուխ 7),
- ✓ կրակմարիչների քանակի հաշվարկին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 բաժին VIII):

Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (ՏՄ պաշտոնական կայքում՝ 11 նյութ, մամուլում՝ 42 հոդված, հեռաստատեսությամբ՝ 1 եթեր): Հրդեհների նախականխման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև տնտեսավարողներին տրամադրվել է 382 գրություն:

Քաղաքաշինության բնագավառում

Խորհրդատվություն է տրամադրվել թվով 237 տնտեսավարողների և քաղաքացիների, որից 90 դեպքում (38 %)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են.

- ✓ շենք-շինությունների, ինչպես նաև հարակից հողամասերում կառուցվող շենքերի միջև եղած հեռավորություններին՝ հարաչափերին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 76, 79, 80, 81 կետեր և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ բնակարանների լուսավորության և ինսոլացիոն հաշվարկներին. (Արհեստական և բնական լուսավորում ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմեր).
- ✓ պատուհաններից դեպի հարևանի տարածք տեսանելիության հետ կապված հարցեր («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 79, 80, 81 կետեր)
- ✓ կառուցապատողների և հարևան շենքերի սեփականատերերի միջև գրավոր համաձայնությունների հետ կապված հարաբերություններին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 81 կետ և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).

✓ շենք շինությունների նպատակային և գործառնական նշանակությյունների փոփոխության հարցերին.(ՀՀ կառավարության 02.02.2002թ.N88 որոշումամբ հաստատված կարգի 3.1 և 3.2 կետեր)։

Խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության բոլոր հասանելի միջոցներով (մամուլում՝ 5 հոդված, ՏՄ պաշտոնական կայքում՝ 3 հոդված)։

Տրանսպորտային անվտանգության բնագավառում

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 61 հոդված, լրատվամիջոցներին տրամադրվել է յուրաքանչյուր նյութի վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ, մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է 268 հրապարակում։ Ուղարկվել են նաև նախազգուշացնող բնույթի գրություններ և ծանուցումներ։

Տեսչական մարմնի կողմից խորհրդատվություն է տրամադրվել թվով 189 միջմարզային, ներմարզային և միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տնօրենների։ Խորհրդատվություն է տրամադրվել 274 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 140 դեպքում (51 %)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, 134 դեպքում (49%)՝ տնտեսավարող սուբյեկտների կամ քաղաքացիների պահանջով։

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է Էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 3 հաղորդագրություն։ Տպագիր լրատվամիջոցներով հրապարակվել է 30 մամուլի հաղորդագրություն։ Նկարահանվել է Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում 1 տեսահոլովակ։

Իրավախորհրդատվական աջակցություն է տրամադրվել 179 տնտեսավարողների և քաղաքացիներին, ընդ որում 116 դեպքում (շուրջ 65%) Տեսչական մարմնի նախաձեռնությամբ։ Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից տրված հարցերը հիմնականում կապված են ՀՀ տարածքում 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու գործընթացի հետ, որն իրականացվում է համաձայն 2004թ. դեկտեմբերի 14-ի «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի գ) ենթակետի։

Իրազեկելու նպատակով կազմակերպվել է 54 հանդիպում, որից 23-ը (42.6%)՝ Արարատի, 17-ը (31.5%)՝ Լոռու, 9-ը (16.7%)՝ Սյունիքի և 5-ը (9.2%)՝ Վայոց Ձորի մարզերում։

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

ՔՏՀԱՏՄ աշխատակիցների կողմից՝ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև օրենսդրական պահանջներին վերաբերվող խորհրդատվություններ: Այդ թվում.

- ✓ հողային հաշվեկշիռը (բալանսը) ճիշտ կազմելու վերաբերյալ (ՀՀ կառավարության 23.10.2000թ. «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 31.05.2005թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների, մարզերի և Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռները կազմելու մասին հրահանգները հաստատելու մասին» թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգ),
- ✓ աճուռդային փաթեթների պարունակության վերաբերյալ (ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 12.04.2001 թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 3-րդ կետի ա) և գ) ենթակետեր),
- ✓ հողերի նպատակային նշանակությունը փոխելու համար՝ միջգերատեսչական հանձնաժողով ուղարկվող փաթեթների պարունակության, նպատակային և գործառնական հողատեսքերի կարգավիճակը փոխելու վերաբերյալ՝ (ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշում):

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում տեղադրվել է 6 հոդված, տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել է 46 հաղորդագրություն:

Տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող աշխատանքային այլ հանդիպում-քննարկումների, այցերի, ժողովների վերաբերյալ հաշվետու կիսամյակում ՏՄ պաշտոնական կայքէջում տեղադրվել է 54 հոդված, որոնք հրապարակվել են նաև տպագիր մամուլով (թվով 18 նյութ):

Կազմակերպվել է ՏՄ մարմնի գործունեության ոլորտներին վերաբերող 49 հեռուստաելույթներ, որից 4-ը ընդհանուր գործունեությանը վերաբերող:

ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և ՔՏՀԱՏՄ-ի համագործակցությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նկարահանվել է 1 իրազեկող բնույթի տեսահոլովակ՝ ներտնային գազասպառման համակարգի անվտանգության ապահովման

վերաբերյալ, որը ՀՅ հ/ը, Շանթ հ/ը, Նոր Հայաստան հ/ը հետ ձեռքբերված պայմանավորվածության արդյունքում 2 ամիս օրը 2-3 անգամ ցուցադրվել է նշված հեռուստաընկերություններով:

ՔՏՀԱ Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի նախաձեռնությամբ և ՏՄ ղեկավարի անմիջական մասնակցությամբ նշված ժամանակահատվածում կատարվել են իրազեկման աշխատանքներն՝ Արմավիրի մարզի Արգավանդ-Փարաքար գյուղերի տարածքում գործող (Արգավանդի կահույքի խանութներ) շուրջ 40-ից ավելի կահույքի վաճառքով և արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների հետ: Տրամադրվել են հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ պատրաստված իրազեկող գրքույկներ և խորհրդատվություն:

Հաշվետու կիսամյակում Տեսչական մարմնի թեժ գծի հեռախոսահամարներով ստացվել է թվով 66 ահազանգ, որից 62-ն ավարված է, թվով 4-ը դեռևս ընթացքի մեջ է:

Լրատվամիջոցներին հրապարակումներ հիման վրա տրվել թվով 3 պաշտոնական պարզաբանում:

Covid-19 համավարակով պայմանավորված ՔՏՀԱՏՄ-ի տրանսպորտի անվտանագության վարչության կողմից հանրային տրանսպորտում ՀՀ պարետի կողմից տրված անվտանգության կանոններին հետևելու նպատակով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի նախաձեռնությամբ Տեսչական մարմնի և ՃՈ համապատասխան պաշտոնյաների հետ համատեղ կազմակերպվել է 1 ասուլիս, ինչպես նաև Արտակարգ դրության պայմաններում Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի նախաձեռնությամբ և համակարգմամբ ամենօրյա գրաֆիկով լուսաբանվել է հանրային տրանսպորտի նկատմամբ իրականացվող վերահսկողության, մշտադիտարկման ընթացքը:

Մասնավորապես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ պատրաստվել է 32 ռեպորտաժ՝ ստուգումների և վերահսկողության ընթացքի մասին, Հանրային, Շանթ հեռուստաընկերությունների, ինչպես նաև FactorTV և aravot.am էլեկտրոնային տեղեկատվական հարթակների կողմից ապահովվել է 21 ուղիղ եթեր՝ տրանսպորտի դիտարկման վայրից, առանձին նաև վերահսկողության ընթացքի վրաբերյալ ՀՅ-ի կողմից պատրաստվել է 15 ռեպորտաժ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկումների ընթացքում արխիվավորվել է ՔՏՀԱ տեսչական մարմնի գործունեության ոլորտներին վերաբերով թվով 355 լրատվական հրապարակում:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Գեոդեզիա և հողօգտագործում

Համապատասխան առաջարկություն ներկայացվել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ:

Առաջարկի բովանդակությունը՝ Ղեկավարվելով «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված պահանաջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2019 թվականի N 1071 որոշման, ինչպես նաև ՀՀ վարչապետի հունիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և ոլորտների հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողական գործառույթները՝ ստուգման միջոցով իրականացնելու անհրաժեշտությունը, համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպան և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, Տեսչական մարմնի կողմից առաջարվել են վերը նշված ոլորտներում ստուգումների ստուգաթերթերի նախագծեր: Ստուգաթերթերը կազմվել են գեոդեզիայի և քարտեզագրման ոլորտների և գործունեության օրենսդրական պահանջների պահպանմամբ՝ հիմնվելով ստուգում իրականացնող Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի և աշխատանքի առանձնահատկությունների վրա:

7.2 Քաղաքաշինություն և էներգետիկա

Հաշվետու ժամանակահատվածում առաջարկվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ:

Առաջարկվել է.

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 157^{10}-րդ հոդվածում հիսնապատիկի բառը փոխարինել հիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 105-րդ հոդվածում քսանապատիկի բառը փոխարինել երեսնապատիկից մինչև հիսնապատիկի բառերով, իսկ հիսնապատիկի բառը՝ հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի բառերով:

Առաջարկի բովանդակությունը՝ Ներկայացված առաջարկը պայմանավորված է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական տույժերի՝ տուգանքների չափերի բարձրացման անհրաժեշտությամբ, քաղաքաշինության և էներգետիկայի ոլորտում տիրող իրավախախատումների վերլուծությամբ և իրավիճակով: Վարչական պատասխանատվություն նախատեսող ցածր տուգանքների պայմաններում հաճախ, ինչպես քաղաքացիների, այնպես էլ պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառված

տույժերը հետագայում նման խախտումներ տույլ չտալու ազդակ չեն հանդիսանում, դրանք չենք կրում կանխարգելիչ բնույթ։ Արդյունքում, Տեսչական մարմինը ստիպված է լինում դիմել դատարան՝ դատական կարգով կարգադրագրերը և ցուցումները կատարելուն պարտավորեցնելու պահանջով։

Կարգադրագրերը և ցուցումները չկատարելու համար համեմատաբար մեծ չափի տուգանքներ նախատեսելու դեպքում վարչական տույժի ենթարկվածը կգերադասի սահմանված ժամկետներում կատարել կարգադրագրի (ցուցումի) պահանջները և խուսափել ավելի բարձր տուգանքից։

Ակնկալվող արդյունքը՝ Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների արդյունքների վերլուծությամբ արձանագրվել է, որ գործող պատժաչափերի կիրառմամբ պայմանավորված իրավախախատումների ծավալների նվազեցում չի նկատվում։ Ակնկալվում է, որ պատասխանատվության չափերի ավելացումը կնպաստի նաև իրավախախատումների քանակական նվազեցմանը։

<u>7.3 Տրանսպորտային անվտանգություն</u>

Առաջարկվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ.

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել 137[8]-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

137[8]. Տրանպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների իրականացմանը խոչընդոտելը կամ թույլ չտալը, ինչպես նաև այդ մարմնի պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերի պահանջները սահմանված ժամկետում չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով։։

Առաջարկի բովանդակությունը

Տրանսպորտի ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքի համաձայն Տեսչական մարմնի կողմից տնտեսավարողներին տրվում են կարգադրագրեր՝ բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ՝ սահմանելով ժամկետներ դրանց վերացման համար։ Սակայն գործող օրենսդրությամբ չկա համապատասխան կարգավորում, որը կնախատեսեր Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի ոլորտում տրված կարգադրագրերի պահանջները չկատարելու համար պատասխանատվություն, ինչպես օրինակ՝ քաղաքաշինության, էներգետիկայի, տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտներում է։ Արդյունքում, Տեսչական մարմնի կողմից տվյալ ոլորտում տրված կարգադրագրերը չկատարվելու դեպքում դրանք մնում են անկատար՝ համապատասխան գործիքակազմի բացակայության պատճառով։

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություն է ներկայացվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ Ոստիկանություն:

Առաջարկը վերաբերվել է ծանրաքարշ կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների չափորոշիչների սահմանման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելուն:

Առաջարկի բովանդակությունը՝ 1. ՀՀ ԿՈ 20.06.2006թ. թիվ 1106-ն որոշման I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ Գլխի 2-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «հատուկ թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով՝ 44 տոննա ընդհանուր զանգվածը կամ մեկ առնու վրա ընկնող բեռնվածքը 11.5 տոննան գերազանցող ծանրաքաշ տրանսպորտային միջոցով չմասնատվող բեռ փոխադրելու իրավունք վերապահող փաստաթուղթ»:

2. Որոշման IV. ԾԱՆՐԱՔԱՇ ԵՎ (ԿԱՄ) ՄԵԾ ԵԶՐԱՉԱՓԵՐՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ Գլխի 26-րդ կետից հետո ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ՝ «թույլատրելի առավելագույն զանգվածը և (կամ) մեկ առնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ տրանսպորտային միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացման նպատակով, տրանսպորտի ոլորտում վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը իրավասու է իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման և չմասնատվող բեռ փոխադրելու համար թույլտվություններ տվող լիազոր մարմնի էլեկտրոնային շտեմարանից առցանց ստանալու համապատասխան տեղեկատվություն»:

Ակնկալվող արդյունքը՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գործառույթների կատարելու համար համապատասխան օրենսդրական հիմքերի ստեղծումն է:

7.4 Համաչափ վարչարարություն

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնում իրականացված վարչական գործերի քննության, վարչական վարույթների որակային բարելավման նպատակով ՀՀ Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ առաջարկություն է ներկայացվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 225-րդ հոդվածի

1. 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Հրդեհային անվտանգության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և որոշումներ կայացնելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը և/կամ ղեկավարի տեղակալը».

2. ա), բ) և գ) կետերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 232.[1]-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 104, 105 և 106[1] -րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և որոշումներ կայացնելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը և/կամ ղեկավարի տեղակալը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 244.[11]-րդ հոդվածի

1. 2-րդ պարբերության մեջ «վարչական տույժեր նշանակելու» բառերը փոխարինել «որոշումներ կայացնելու» բառերով:

2. 1-ին և 2-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի և ավելի չափով.

2) քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի չափով, և նախազգուշացում:»:

3. 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 244.[13]-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ «վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «որոշումներ կայացնելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը և/կամ ղեկավարի տեղակալը» բառերով:

Առաջարկի բովանդակությունը՝ Գործող իրավակարգավորումների համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և որոշումներ կայացնելու իրավունք ունեն Տեսչական մարմնի ղեկավարը և տարածքային ստորաբաժանումների պետերը: Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումները չունեն իրավաբանի հաստիք, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունն իրականացնում են մասնագիտացված ոլորտների մասնագետները: Վարչական

իրավախախտումների վերաբերյալ գործերը հնարավորինս վերահսկելի դարձնելու, համակարգված ինչպես նաև ոչ ռիսկային վարչական ակտերի ընդունումը բացառելու նկատառումից ելնելով՝ առաջարկվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության արդյունքում որոշումներ կայացնելու իրավասությունը վերապահել Տեսչական մարմնի ղեկավարին և ղեկավարի տեղակալներին։ Նման կարգավորումը կապահովի նաև միատեսակ և համաչափ վարչարարության իրականացումը։

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի Տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչարարության համաչափությունը, միասնականությունը, վերահսկելիությունը։

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնի դեմ բերվել է 13 բողոք վերադասության կարգով: Ըստ վերահսկման առանձին ոլորտների՝ պատկերը հետևյալն է.

Տեխնիկական անվտանգության բնագավառում կայացված 3 վարչական ակտ է բողոքարկվել, որոնցից 1-ը թողնել է անփոփոխ, 1-ը՝ կարճվել է, քանի որ բողոքարկվել է միաժամանակ և՛ դատական, և՛ վերադասության կարգով, 1-ը կարճվել է ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով, համաձայն որի անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 7 վարչական ակտ, բոլորը կարճվել են:

Տրանսպորտի անվտանգության բնագավառում կայացված 2 վարչական ակտ է բողոքարկվել վերադասության կարգով, 2 դեպքում էլ կայացված վարչական ակտերը թողնվել են անփոփոխ:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում բողոքարկվել է 1 վարչական ակտ, որը քննության արդյունքում մի մասով կարճվել, իսկ մի մասով՝ թողնվել է անփոփոխ:

8.1. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Տեսչական մարմնի դեմ ներկայացվել է 40 հայցադիմում, որոնք մեծամասամբ վերաբերում է Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի (որոշում, կարգադրագիր) վիճարկմանը

1. տրանսպորտի ոլորտում՝ 22 հայցադիմում, որից 1-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, 4-ով հայցադիմումները վերադարձվել են, 17-ն՝ ընթացքի մեջ են.

2. գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտում՝ 7 հայցադիմում, որից 5-ը ընդունվել է վարույթ, գտնվում են ընթացիկ փոլում, 2-ի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել.

3. տեխնիկական անվտանգության ոլորտում՝ 10 հայցադիմում, որից 1-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ (Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք), 9-ն՝ ընթացքի մեջ են.

4. քաղաքաշինության ոլորտում՝ 1 հայցադիմում, որով Տեսչական մարմինը հանդիսանում է երրորդ անձ, գտնվում է ընթացիկ փուլում.

5. էներգետիկայի և էներգասպառման ոլորտում՝ 1 հայցադիմում, գտնվում է ընթացիկ փուլում:

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի և 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված հսկողական և վերահսկողական միջոցառումների շնորհիվ բացահայտվել և թիրախավորվել են մի շարք ռիսկեր, ձեռնարկվել են միջոցառումներ դրանց նվազեցման ուղղությամբ:

<u>Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում</u>

1.Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1697-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներով և հաշվի առնելով 2019 թվականի ընթացքում արձանագրված հրդեհների վիճակագրությունը՝ Տեսչական մարմինը 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով թիրախավորել է հրդեհային անվտանգության տեսակետից հետևյալ առավել ռիսկային ոլորտները՝

- ✓ արտադրական նշանակության օբյեկտներ,
- ✓ բենզալցակայաններ և գազալցավորման կայաններ,
- ✓ առևտրի և հասարակական սննդի օբյեկտներ,
- ✓ պայթուցիկ նյութերի, նավթամթերքների, հեղուկ և բնական գազերի պահեստներ:

<u>Իրականացված միջոցառումներ՝</u>

2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով իրականացվել է 195 ստուգում: Ստուգման արդյունքների հիման վրա տնտեսվարողներին տրվել են ակտեր և հայտնաբերված թերությունները վերացնելու համար կարգադրագրեր:

2. Յուրաքանչյուր տարի հրդեհավտանգ ժամանակաշրջանում, հատկապես երաշտի պայմաններում, տարերային գործոնների, բնակչության անզգուշության, ինչպես նաև բուսածածկ տարածքների հրդեհային անվտանգության պահանջների ապահովման համար պատասխանատու կառույցների անփութության հետևանքով բռնկվում են հրդեհներ, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում տնտեսության, մարդկանց կյանքի ու անվտանգության համար:

<u>Իրականացված միջոցառումներ</u>

Հրդեհների կանխարգելման, հետևանքների վերացման, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցման, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով Տեսչական մարմնի կողմից կազմակերպվել են համատեղ խորհրդակցություններ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների, Հայաստանի փրկարար ծառայության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև նախազգուշական նամակներ են ուղարկվել Գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն և ՀՀ բոլոր մարզպետներին:

Քաղաքաշինության բնագավառում

1. Համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին թիվ 624 որոշման պահանջների՝ պետական վերահսկողության ենթակա են քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերը՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պահանջների իրականացում, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկում, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և նախագծման տեխնիկական պայմանների տրամադրում կառուցապատողներին, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցում, փորձաքննություն ու հաստատում, շինարարության (քանդման) թույլտվություն, շինարարության իրականացում, հեղինակային ու որակի տեխնիկական հսկողություն, շինարարության ավարտական ակտի ձևակերպում, շենքերի ու շինությունների շահագործում:

Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության խնդիրներն են՝

ա) քաղաքաշինական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից,

բ) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պահանջների կատարման ապահովումը,

գ) աշխատանքներ իրականացնող սուբյեկտների կողմից քաղաքաշինական նորմատիվ՝ տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման ապահովումը,

դ) բնակավայրերի և այլ գործառական տարածքների հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինության նպատակով օգտագործումը,

ե) շենքերի և շինությունների շինարարության (քանդման) և շահագործման ընթացքում բնակչության ու շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը,

զ) ինքնակամ շինարարության (քանդման) կանխարգելումանը և կասեցմանը ուղղված միջոցառումների իրականացումը:

Նշված աշխատանքների լիարժեք իրականացումը կախված է մասնագետների թե՛ քանակից, թե՛ արհեստավարժությունից:

Իրականացված միջոցառումներ՝

Տեսչական մարմնի քաղաքաշինությ բնագավառի աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով մշակվել է ուղեցույց ավարտված շինարարական օբյեկտի հանձնաժողովի աշխատանքներին մասնակցության ժամանակ ուսումնասիրության ենթակա քաղաքաշինական փաստաթղթերի ՀՀ օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերին համապատասխանության եվ իրավաչափության վերաբերյալ:

2. Համաձայն Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի Տեսչական մարմինը ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս պետք է առաջնորդվի ռիսկայնության հաշվարկով՝ իր սահմանափակ ռեսուրսներն ուղղելով դեպի առավել ռիսկային ոլորտներ: Այդ նպատակով 2019 թվականի ընթացքում լրամշակվեց և ՀՀ

կառավարության կողմից հաստատվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշումը, որով սահմանվեցին քաղաքաշինության բնագավառում իրականացնելու համար օբյեկտների ընտրության չափորոշիչները: Այս ձևաչափով հաշվարկներ կատարելու համար անհրաժեշտ է համայնքների ղեկավարների կողմից ամբողջական լրացված Ձև 2-5 տեղեկանքների և շինարարության թույլտվությունների ժամանակին ներկայացնելը:

3. 2019 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքների, ինչպես նաև կատարված վարչական վարույթների շնորհիվ բացահայտված խնդիրները հիմնականում վերաբերում են համայնքների ղեկավարների կողմից կարգերի շեղումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրմանը, համայնքների ղեկավարների կողմից նախագծման թույլտվությանը (ճարտարապետահատակագծային առաջադրանքին) հակասող նախագծերի համաձայնեցմանը և ինքնակամ կառույցների նկատմամբ ոչ պատշաճ հսկողության իրականացմանը, կառուցապատողի կողմից՝ նախագծային շեղումներին, աշխատանքների որակի տեխնիկական և նախագծային հսկողության ոչ պատշաճ իրականացմանը:

<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>

1. ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը, ինչը բխում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներից, որոնց համաձայն անհրաժեշտ է հնարավորինս կանխարգելել միջպետական ուղևորափոխադրումների ոլորտում առկա ռիսկերը՝ ապահովելով բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների և ուղևորների սպասարկման անվտանգությունը:

<u>Իրականացված միջոցառումներ՝</u>

Երևանի տրանսպորտային անվտանգության և Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից կատարվել են վերահսկողական գործառույթներ «Հայավտոկայան» ՓԲԸ-ի ավտոկայարանների տարածքներից միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ, կազմվել է վերահսկողության արդյունքների ամփոփման թվով 23 արձանագրություն: Ուշադրություն է դարձվում նաև «Հայավտոկայան» ՓԲԸ-ի և միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերին, որոնք քննարկվել են նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում:

Նախազգուշական նամակներ են ուղարկվել միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող թվով 26 իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, որոնք չեն ունեցել վերը նշված պայմանագրերը։

2. տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից տաքսամոտորային ուղևորափոխադրումները, որտեղ ռիսկերը պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ։

Իրականացված միջոցառումներ՝

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության աշխատակիցների հետ համատեղ իրականացրել են վերահսկողական գործառույթներ, դիտարկումներ տրանսպորտային միջոցների կուտակման վայրերում տաքսամոտորային ուղևորափոխադրումների գործընթացի նկատմամբ։ Ձեռնարկվել են անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝ վերահսկողության արդյունքների ամփոփման 17 արձանագրությունների կազմում։

3. ՀՀ տարածքում Հայավտոկայան ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպումը, այն է՝ չվացուցակներով սահմանված սպասարկման ռեժիմի համաձայն փոխադրումների կազմակերպման ապահովումը, ծառայությունների մատուցումը, ուղեբեռի ժամանակավոր պահպանման իրականացումը, ուղևորների նստեցման և անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացները։

Իրականացված միջոցառումներ՝

Ավտոկայարանային գործունեության կազմակերպման գործընթացների ~~հետագա~~ բարելավման ուղղությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նաձարարությանը և «Հայավտոկայարն» ՓԲ ընկերությանն առաջարկվել է

- ✓ խստիվ արգելել ավտոկայարանների, ավտոկայանների, երթակարգավարան կետերի տարածքներում սպիտակ պետհամարանիշերով մեքենաների և տաքսիների կայանումը.
- ✓ շտկել մայրաքաղաքի «Նոր-Նորքի 1-ին զանգվածի», «Կիլիկիայի», «Շիրակի», ինչպես նաև մարզերում գործող երթակարգավարական կետերի անմխիթար վիճակը, երթակարգավարների կողմից երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների կայանման, ուղևորների նստեցման և անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացները.
- ✓ ավտոկայարանների, ավտոկայանների սպասասրահների կահավորումը համապատասխանեցնել կարգի պահանջներին.
- ✓ ապահովել ուղևորների տոմսավարումը՝ համաձայն գործող կարգի պահանջների

- ✓ բացառել ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում փոխադրող կազմակերպությունների կողմից նշանակված երթակարգավարների գործառույթները.
- ✓ ասֆալտապատել ավտոկայարաններում և ավտոկայաններում, բացառությամբ «Հարավային» ավտոկայարանի, տարածքները.
- ✓ միջպետական ուղևորափոխադրումների գործընթացների կազմակերպումը իրականացնել բացառապես ավտոկայարաններից և ավտոկայաններից.
- ✓ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում իրականացվող աշխատանքների օպտիմալացման և ուղևորափոխադրումների պատշաճ սպասարկման նպատակով գործող չվացուցակների վերանայում.
- ✓ ավտոկայարաններում և ավտոկայաններում տեղեկատու ծառայությունների ապահովում.
- ✓ միջմարզային և ներմարզային կանոնավոր երթուղիները շահագործող տրանսպորտային միջոցների մեկնումը իրականացնել միայն մարզկենտրոնների ավտոկայարաններից, ավտոկայաններից կամ երթակարգավարական կետերից, ապահովելով երթուղին սպասարկող տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի և վարորդի առողջական վիճակի նախաուղերթային զննման աշխատանքների պատշաճ կազմակերպումը:

4. ներքաղաքային կանոնավոր երթուղիների սպասարկման իրականացումը Երևան քաղաքում և հանրապետության խոշոր բնակավայրերում: Քաղաքացիներից և տնտեսվարող սուբյեկտներից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են կանոնավոր երթուղիների չվացուցակների անհստակությանը, չվացուցակների կրկնություններին, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, ինչպես նաև կանոնավոր երթուղու ուղեգծով երթևեկող բազմաթիվ ոչ կանոնավոր և տաքսամոտորային փոխադրողների առկայությանը:

<u>Իրականացված միջոցառումներ՝</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ պարբերաբար իրականացվել են հանդիպում-քննարկումներ կանոնավոր երթուղիների չվացուցակների անհստակությունները ճշտելու, չվացուցակների կրկնությունները բացառելու նպատակով: Քննարկումներ են եղել նաև Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության հետ, որի արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն 2020թ. նոյեմբեր ամսին միասնական ցանցի շահագործմանը զուգահեռ կարգավորել նաև չվացուցակները: Ներկա պահին «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում կատարվում են փոփոխություններ, որոնք թույլ կտան իրականացնել ավելի պատշաճ վերահսկողություն կանոնավոր երթուղու ուղեգծով երթևեկող բազմաթիվ ոչ կանոնավոր և տաքսամոտորային փոխադրողների նկատմամբ:

5. ծանրաքարշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների կազմակերպումը, որի ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի

բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ։

Իրականացված միջոցառումներ՝

Ծանրաքարշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով ներկայումս Ազգային ժողովում քննարկվում է սահմանային անցման կետերում տեսչական մարմնի կողմից վերահսկողություն իրականացնելու հարցը։

6. ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեությանը ներկայացվող օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, որի ռիսկայնությունը կապված է տրանսպորտի շահագործման և անվտանգության կանոնների խախտումների հետ։

Իրականացված միջոցառումներ՝

ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին ուղղված գրությամբ առաջարկել է՝ ղեկավարվելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3–րդ կետի ա) ենթակետի պահանջով, ինչպես նաև ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնին վերապահված կանոնավոր ուղևորափոխադրումներում ընդգրկված ավտոբուսների, միկրոավտոբուսների համար համապատասխան պարբերականությամբ՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ տեխնիկական զննման փաստացի իրականացման նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացման նպատակով տեխնիկական զննման ներդրվող էլեկտրոնային համակարգի շտեմարանին առցանց միացման հնարավորություն նախատեսել նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի համար։

Միաժամանակ ներկայացվել են առաջարկներ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ։

7. տրանսպորտային անվտանգության ապահովմանը խոչընդոտող հիմնական պատճառներն են գործող օրենսդրության մեջ առկա բացթողումները և Տեսչական մարմնին վերապահված իրավասությունների շրջանակի որոշակի սահմանափակումները, ինչպես նաև նյութատեխնիկական ռեսուրսների (տրանսպորտային և տեխնիկական այլ միջոցներով հագեցվածություն, ծանրաքարշ բեռնատարներով փոխադրվող բեռնվածքի քաշի կշռման համար անհրաժեշտ համապատասխան կշեռքների ապահովում, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման անցկացման և վտանգավոր բեռների փոխադրումների վերաբերյալ Լիազոր մարմնի և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվության էլեկտրոնային բազաներին առցանց միացում և այլն) պակասին, աշխատանքների ծավալի անհամապատասխանությունն անձնակազմի թվաքանակ ին։

Իրականացված միջոցառումներ՝

ՀՀ տեսչական մարմինների համակարգման գրասենյակ ներկայացվել են առաջարկություններ ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքարշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկության նկատմամբ դիտարկումների և վերահսկողական գործառույթների իրականացման վերաբերյալ, համաձայն որի անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

- ✓ օրենսդրական փոփոխություններ՝ Տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության մասնագետին օրենսդրորեն վերապահել տրանսպորտային միջոցի կանգնեցման, տրանսպորտային միջոցին, բեռնվածքին և վարորդին վերաբերող համապատասխան փաստաթղթերի ստուգման գործառույթներ իրականացնելու իրավասություններ.
- ✓ ծառայողական պարտականությունների պատշաճ և թափանցիկ կատարման նպատակով տրանսպորտային անվտանգության մասնագետի համար նախատեսել հատուկ համազգեստ և տարբերանշան.
- ✓ բեռնափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ դիտարկումներ և վերահսկողական գործառույթները լիարժեք և առանց խոչընդոտների իրականացնելու համար անհրաժեշտ է ծանրաքարշ տրանսպորտային միջոցի կշռման համար ապահովել պատշաճ պայմաններ, այն է նախատեսել առնվազն 40 մետր երկարության հարթ մակերեսով հատուկ տարածքներ, որտեղ հնարավոր լինի տեղադրել կշռող սարքեր՝ կշռման անսխալ և առանց կասկածի տեղիք տալու արդյունք գրանցելու համար.
- ✓ կշռման քաշի շեղումներից խուսափելու և կշռման սխալանքի ցածր գործակից կիրառելու համար առաջարկվել է օգտագործել I դասի ճշտության կշեռքներ: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը պատկանող ներկայիս երկու կշեռքները միջին՝ 3-րդ դասի ճշտության են: ՀՀ 10 մարզերում և մայրաքաղաքում կշռման գործառույթների իրականացման համար անհրաժեշտ է թվով 11 կշեռք.
- ✓ Բեռնափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ արդյունավետ վերահսկողական գործառույթների իրականացման նպատակով կատարել ՀՀ տարածքում գործող բնական պաշարների հանքավայրերին հարող հիմնական և տարանցիկ ավտոմոբիլային ճանապարհների քարտեզագրում
- ✓ միջպետական բեռնափոխադրումների կազմակերպման և իրականացման գործընթացի նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացման համար ՀՀ սահմանային անցման 4 կետերում նախատեսել ամենօրյա 24 ժամյա հերթափոխային աշխատանքային ռեժիմով ծառայություն իրականացնելու համար առանձնացված տարածք՝ յուրաքանչյուր անցման կետի համար նվազագույնը տրանսպորտային անվտանգության մասնագետի 3-ական հաստիքի հաշվարկով:

<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>

1. «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ 5.8 ՄՎտ-ից բարձր դրվածքային

հզորության ջերմամատակարարման համակարգում ստուգումներ չեն իրականացվում համապատասխան ստուգաթերթերի բացակայության պատճառով:

Իրականացված միջոցառումներ՝

Ստուգումների տարեկան ծրագրով իրականցրած ստուգումների ժամանակ բացահահայտված ռիսկերը նվազեցնելու նպատակով՝ առաջնահերթության կարգով կազմվել են նոր ստուգաթերթերի նախագծեր էլեկտրաէներգետիկայի և գազամատակարարման համակարգերում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար:

2. Ստուգումների տարեկան ծրագիրը կազմվում է ելնելով տնտեսավարող սուբյեկտների և դրանց օբյեկտների ռիսկայնության գնահատումից, ինչը առաջին հերթին ենթադրում է Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում գործունեություն իրականացնող շուրջ 10 000 տնտեսավարող սուբյեկտների և դրանց օբյեկտների տեղեկատվական բազայի ձևավորման աշխատանքների կատարում՝ ըստ համապատասխան չափորոշիչների:

Իրականացված միջոցառումներ՝

Կատարվող ստուգումներին զուգահեռ իրականացվում են ստուգվող սուբյեկտների բազավորման և ռիսկայնության գնահատման աշխատանքներ:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում

1. 2019 թվականին դիմումների, գրությունների և ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված 41 ստուգումների վիճակագրությունը ցույց տվեց, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները հանդիսանում են հիմնական ռիսկային ուղղությունները: Բնագավառի առաջնային խնդիրներից է պետական մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը, տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական մարմինների անգործության դրսևորումը:

2. Համապատասխան մեթոդաբանության և ստուգաթերթերի բացակայության պատճառով Տեսչական մարմինը չի կարողանում իրականացնել ստուգումներ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում:

Իրականացված միջոցառումներ՝

Մշակվել և փորձարկման փուլում են գտնվում որակավորման վկայական ստացած ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրականացնող քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքների ստուգման, ՀՀ տարածքում աշխարհագրական օբյեկտների ստուգման, գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ստուգման ստուգաթերթեր:

3. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների համար կիրառվող պատասխատավության միջոց տուգանքների չափերը համաչափ չեն թույլ տրված խախտումներին, ուստի անհրաժեշտ է սահմանել տուգանքների ավելի մեծ չափեր՝ ոլորտում տեղի ունեցող զանցանքների դեմ առավել արդյունավետ պայքարելու և հետագա հնարավոր զանցանքները կանխելու համար։

10. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՋՄՎԱԾ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի 1-ին եռամսյակ
Նպատակի չափորոշիչներ

	1.1. Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը			1.2. Ուղղտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը			1.3. Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները	1.4. Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները	1.5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը
	S1- հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար	S- ստուգաթերթերով սահմանված կշիռների գումար	$L = S_1/S$	$S_ռ$ – հաշվետու ժամանակահատվածում ոլորտի բարձր ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար	S– վերահսկողության արդյունքում ստուգաթերթերով սահմանված կշիռների գումար	$C = S_ռ/S$			Այս կետի համար հաշվետու ժամանակահատված է համարվում չորս եռամսյակը:
Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ	6226	32127	0.193793383	5885	30688	0.19176877	0	0	0
Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ	433	3947	0.109703572	433	3947	0.109703572	0	0	0
Տրանսպորտի անվտանգության ոլորտ	76	390	0.194871795	76	390	0.194871795	0	0	0
Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ	0	0	0	0	0	0	0	0	0
Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման ոլորտ	0	0	0	0	0	0	0	0	0

2020 թվականի 1-ին եռամսյակ
Գործընթացի չափորոշիչներ

	2.1. Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը			2.2. Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ			2.3. Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը			2.4. Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին			2.5. Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից
	T – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողություն	N – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակ	**R = T/N**	N2– բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակ	N1– ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրական ացված ստուգումների ընդհանուր քանակ	**R= N2/N1**	T - ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և իրական ացված ստուգումների ընդհանուր տևողություն	N – ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրական ացված ստուգումների քանակ	**A = T/N**	N2– ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ)	N1 – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	R = N2/N1	
Տեխնիկական և հիդեհային անվտանգության ոլորտ	9	4	2.3	125	125	1	377	125	3.016	0	4	0	0
Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ	0	0	0	35	35	1	160	35	4.571429	0	0	0	0
Տրանսպորտի անվտանգության ոլորտ	0	0	0	5	5	1	25	5	5	0	0	0	0
Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման ոլորտ	3	2	1.5	0	0	0	10	1	10	0	2	0	0

2020 թվականի 1-ին եռամսյակ
Արդյունքի չափորոշիչներ

	3.1. Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը			3.2. Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը			3.3. Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները		3.4. Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները		
	N2 – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	N1– ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	**R = N2/N1**	Այս չափորոշչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում չորս եռամսյակը:					Տեսչական մարմին ներկայացված	Դատարան տրված	Դատարան տրված գործերի ընթացքը
Տեխնիկական և հիդեհային անվտանգության ոլորտ	4	125	0.032	0	0	0	0	0	2*	4	4
Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ	0	35	0	0	0	0	0	0	0	1	1
Տրանսպորտի անվտանգության ոլորտ	0	5	0	0	0	0	0	0	0	16	16
Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ	0	0	0	0	0	0	0	0	7*	2	2
Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման ոլորտ	2	1	2	0	0	0	0	0	0	0	0

Ստորև ներկայացվում է Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը.

*Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտում 7 դիմում-բողոքները վերաբերվում են ՀՀ ՔՏՀԱՏՄ Արարատի տարածքային բաժնի պետի՝ 17.12.2019 թվականին կայացրած թիվ 16-0004(Ք), 16-0005(Ք), 16-0006(Ք), 16-0007(Ք), 16-0008(Ք), 16-0009(Ք), 16-0010(Ք) վարչական տույժ կիրառելու մասին որոշումներին, վերջինս բեկանվելեն, և վարչական գործերն ուղարկվել են տարածքային ստորաբաժանում՝ նոր քննության։

*Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտին վերաբերող երկու բողոքներից մեկ բողոք մերժվել է, Տեսչական մարմնի ղեկավարի՝ 13.12.2019 թվականի N S15-1/06 որոշումը թողնվել է անփոփոխ, մեկ բողոք՝ բավարարվել. հիմնավորվել է, որ բողոքաբերի բավարար հիմքերի առկայության պարագայում տեսչական մարմնի ղեկավարի՝ 13.02.2020 թվականի N (Հ)21-1/06 որոշումը բեկանվել, և վարչական գործի վարույթը կարճվել է։